## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 230

## ՀԱՄԱՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐ ՌԱԶՄԻԿ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ԵՎ ԼԱՐԻՍԱ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆԸ ՊԱՏԿԱՆՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի և Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով անձնական դիմումը՝ *ո ր ո շ ու մ ե մ.*

1. Ռազմիկ Կիրակոսյանին և Լարիսա Մնացականյանին սեփականության իրավունքով հատկացված 0.15 հա հողամասից ավել օգտագործվող 0.0275 հա տնամերձ հողամասը ճանաչել որպես սեփականություն /ծածկագիր 07-044-0026-0003/:

2. Ավել օգտագործվող 0.0275 հա տնամերձ հողամասի նկատմամբ գրանցել սեփականության իրավունք:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*2018 թ. հոկտեմբերի 23-ին*
*գ.Մեղրաձոր*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 231

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի պահանջով, հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի N03 որոշումը և համայնքի բնակչի դիմումը՝ *ո ր ո շ ու մ ե մ.*

1. Մեղրաձոր համայնքի <<այլ նպաստներ>> 4729 հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ Մեղրաձոր համայնքի սոցիալապես անապահով ընտանիքին՝ համաձայն կից ձևաչափի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*2018թ. հոկտեմբերի 23-ին*
*գ.Մեղրաձոր*

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ղեկավարի ժ/պ-ի
2018 թվականի հոկտեմբերի 23-ի N 231 որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

| հ/հ | Ազգանուն, անուն, հայրանուն | հասցեն | գումարը |
|---|---|---|---|
| 1 | Պետրոսյան Ռիմա Գևորգի | Մեղրաձոր համայնք, գյուղ Մարմարիկ, 7-րդ փողոց 9ա. | 40 000 /քառասուն հազար/ ՀՀ դրամ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 232

## ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N89-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՎԵՐԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <Բյուջետային համակարգի մասին >> օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով և հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի N89-Ն որոշումն՝ *ո ր ո շ ու մ ե մ.*

Մեղրաձոր համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 27-ի <<Մեղրաձոր համայնքի 2018 թվականի բյուջեն հաստատելու մասին>> N89-Ն որոշման հավելվածում կատարել հետևյալ վերաբաշխումներ

Ֆոնդային բյուջեի ծախսային մաս

1. Բաժին 01 խումբ 1 դաս 1 Տող 1214000՝ Տրանսպորտային սարքավորումներ 5121 սինթետիկ հաշիվ <<15 000 000>> թիվը փոխարինել <<0>> թվով:

2. Բաժին 04 խումբ 2 դաս 1 Տող 1214000՝ Տրանսպորտային սարքավորումներ 5121 սինթետիկ հաշիվ <<0>> թիվը փոխարինել <<15 000 000>> թվով:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ՝ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*2018 թ. հոկտեմբերի 25-ին*
*գ.Մեղրաձոր*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

25 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 233

## ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 48-րդ հոդվածի պահանջով, հիմք ընդունելով Մեղրաձոր համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի N03 որոշումը և համայնքի բնակչի դիմումը՝ *ո ր ո շ ու մ ե մ.*

1. Մեղրաձոր համայնքի <<այլ նպաստներ>> 4729 հոդվածով նախատեսված ծախսերից սոցիալական աջակցության նպատակով հատկացնել 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ Մեղրաձոր համայնքի սոցիալապես անապահով բնակչին՝ համաձայն կից ձևաչափի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*2018 թ. հոկտեմբերի 25-ին*
*գ.Մեղրաձոր*

Հավելված
ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի ղեկավարի ժ/պ-ի
2018 թվականի հոկտեմբերի 25-ի N 233 որոշման

Դրամական օգնություն ստացողների ցուցակ

| հ/հ | Ազգանուն, անուն, հայրանուն | հասցեն | գումարը |
|---|---|---|---|
| 1 | Հովհաննիսյան Դարիկո Ստեփանի | Մեղրաձոր համայնք, գյուղ Արտավազ, 2-րդ փողոց 52տ. | 20 000 /քսան հազար/ ՀՀ դրամ |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 234

## ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8,1-10,11,12,13 -րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Միշա Դավրեշյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնք, գյուղ Մարմարիկ 4-րդ փողոց 9 հասցեում գտնվող (ծածկագիր 07-044-019-006 , 0.250 հա) տնամերձ հողամասում կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Միշա Դավրեշյանի դիմումը՝ *ո ր ո շ ու մ ե մ՝*

1.Միշա Դավրեշյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնք, գյուղ Մարմարիկ, 4-րդ փողոց 9 հասցեում գտնվող հողամասում ինքնակամ կառուցված 18.90 քառ.մ <<ինքնակամ բնակելի տուն>>, 57.59 քառ.մ <<ինքնակամ անասնաշենք>> համարել օրինական, հիմք ընդունելով <<ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2. Պարտավորեցնել Միշա Դավրեշյանին՝ համայնքի բյուջե վճարել 18.90 քառ. մ <<ինքնակամ բնակելի տան>> համար 20790 /քսան հազար յոթ հարյուր իննսուն/ ՀՀ դրամ, 57.59 քառ. մ <<ինքնակամ անասնաշենքի>> համար 38009 /երեսունութ հազար ինը/ ՀՀ դրամ:

3. Գումարը 58799 /հիսուն ութ հազար յոթ հարյուր իննսունինը/ ՀՀ դրամ փոխանցել ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Մարմարիկ գյուղի 900125007121 հաշվեհամարին:

4. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

*2018թ. հոկտեմբերի 29-ին*
*գ.Մեղրաձոր*

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Մեղրաձոր, 093 629408, meghradzor.kotayq@mta.gov.am, meghradzor@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2018թվականի N 235

## ԻՆՔՆԱԿԱՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 8, 1-10,11,12,13 -րդ կետերի պահանջներով և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Վարեն Մաքսիմի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ Մեղրաձոր համայնք , Աղավնաձոր գյուղում գտնվող 0.0580 հա (ծածկագիր 07-010-0013-0004 ), տնամերձ հողամասում կառույցների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, շինությունները կառուցված չեն Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերում, ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կառուցված չեն քաղաքաշինության նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, << Տեղական ինքնակառավարման մասին>> օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48 և 51-րդ կետերի պահանջով և հիմք ընդունելով Վարեն Մաքսիմի Ավետիսյանի դիմումը՝ *ո ր ո շ ու մ ե մ*

1.Վարեն Մաքսիմի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող ՀՀ Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնք, Աղավնաձոր գյուղում գտնվող բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված 133,33 քառ.մ <<ինքնակամ բնակելի տուն 1-ին հարկ>>,138,58 քառ. մ <<ինքնակամ բնակելի տուն 2-րդ հարկ>>, 0,72 քառ. մ <<ինքնակամ պարիսպ>> համարել օրինական, հիմք ընդունելով <<ՀՈՂԱՇԻՆԱՐԱՐ>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված հատակագիծը:

2. Պարտավորեցնել Վարեն Մաքսինի Ավետիսյանին՝ համայնքի բյուջե վճարել 133,33 քառ.մ <<ինքնակամ բնակելի տուն 1-ին հարկի>> և 138,58 քառ. մ <<ինքնակամ բնակելի տուն 2-րդ հարկի>> համար 299101 /երկու հարյուր իննսունինը հազար մեկ հարյուր մեկ/ ՀՀ դրամ, 0,72 քառ. մ <<ինքնակամ պարիսպի>> համար 475 /չորս հարյուր յոթանասուն հինգ/ ՀՀ դրամ:

3. Գումարը 299 576 / երկու հարյուր իննսուն ինը հազար հինգ հարյուր յոթանասուն վեց/ ՀՀ դրամ փոխանցել ՀՀ Կոտայքի մարզի Մեղրաձոր համայնքի Աղավնաձոր գյուղի 900125014077 հաշվեհամարին:

4. Որոշման ընդունման օրվանից օրինականացման համար սահմանված վճարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

5. Վարեն Մաքսիմի Ավետիսյանին սեփականության իրավունքով պատկանող բնակելի տանը /վկայական 2481592, տրված 25 հոկտեմբերի 2007թ/ տրամադրել ՀՀ Կոտայքի մարզ, Մեղրաձոր համայնք, գյուղ Աղավնաձոր 3-րդ փողոց 13 փակուղի 1 հասցեն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ Ժ/Պ Ն. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

2018թ. հոկտեմբերի 30-ին
գ.Մեղրաձոր